

ՍԿ- 6537



ՀԱՄԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան
«11» 06 2024թ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 077 - 24

Նախաձեռնող՝

«ԳՐԵՅ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, Առինջ Ա. Մնացականյան փ., փուն 33

Գործունեությունը՝

Սարանիստի բազալտների հանքավայրի 2-րդ փեղամասի A և B բլոկների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկրկություն
Կոտայքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 077 - 24

«11» հունիսի 2024թ.

Կաքավաձորի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ԱՐՄՍԹՈՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Տեղադրման վայրը՝ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Կաքավաձոր բնակավայր

Ներածական մաս. «ԱՐՄՍԹՈՆ» ՍՊԸ ընկերության կողմից նախատեսվում է Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի արդյունահանման աշխատանքներ, որի նախագիծը մշակվել է ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (<Օ-110-Ն) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Կաքավաձորի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում, Կաքավաձոր գյուղի կենտրոնից մոտ 4.2 կմ հարավ-հարավ-արևելք, զբաղեցնում է 6.24 հա մակերեսով տարածք:

Տեղամասը ասֆալտապատ ճանապարհով կապված է Կաքավաձոր գյուղի, Աշտարակ, Երևան քաղաքների հետ:

Արևելքից արդյունահանվող տարածքը սահմանափակվում է Կաքավաձոր և Ագարակավան գյուղերի բնական սահման հանդիսացող ոչ խորը անջուր ձորակով, որը գտնվում է հայցվող տարածքից առավել քան 0.8 կմ հեռավորության վրա:

Մոտակա բնակավայրերն են՝ Կաքավաձոր, Ագարակավան, Կարմրաշեն, Պարտիզակ գյուղերը, Թալին քաղաքը:

Համաձայն գնահատման հաշվետվության հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել:

Հանքավայրի և հարակից տարածքները առնչություն չունեն բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության հուշարձանների հետ:

Հայցվող տարածքում բացակայում են սողանքային երևույթները:

Տեղամասի տուֆերի հանքավայրի տարածքը, մերձակայքը ջրագուրկ են, ստորերկրյա ջրեր և ելքեր (աղբյուրներ) հայտնաբերված չեն, գրունտային ջրերը ջրատար հորիզոններ



չեն առաջացնում, պայմանավորված հանքավայրի տարածքը կազմող ապարների ֆիզիկամեխանիկական հատկություններով, ինչն էլ կնպաստի շահագործման աշխատանքների անվտանգ իրականացմանը: Հաշվի առնելով տուֆերի բարձր ջրաթափանցելիությունը բացահանք ներթափանցվող մթնոլորտային տեղումները արագ ենթարկվում են բնական դրենաժի:

Հարավ-արևմտյան տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենի, միջին չորրորդականի հրաբխային և ժամանակակից փոխը-բեկորային առաջացումները:

Հարավ-արևմտյան տեղամասի տուֆերն որակական ցուցանիշներով բավականին համասեռ են, աչքի են ընկնում դեկորատիվ հատկություններով, թեթևությամբ, պիտանի են շինությունների արտաքին և ներքին հարդարման համար:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 01.02.2023թ. թիվ 195-Ա հրամանով:

Կաքավաձորի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի հաստատված պաշարները դիտարկվում են որպես ուղիղ կտրվածքի պատքարի արդյունահանման հումք /ԳՈՍՍ 4001-2013 «Պատքարեր լեռնային ապարներից: Տեխնիկական պայմաններ»/:

Կաքավաձորի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասը գտնվում է 1335-1370 մ բացարձակ բարձրությունների վրա:

Հարավ-արևմտյան տեղամասի աշխարհագրական կոորդինատներն են.

40°18/47// - հյուսիսային լայնության, 44°03/38// - արևելյան երկայնության

Կաքավաձորի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով հետևյալն են.

- | | | | |
|--------------|-----------|--------------|-----------|
| 1. X=4464597 | Y=8420032 | 5. X=4465049 | Y=8420037 |
| 2. X=4464792 | Y=8420032 | 6. X=4464884 | Y=8420120 |
| 3. X=4464877 | Y=8419972 | 7. X=4464792 | Y=8420187 |
| 4. X=4465003 | Y=8419949 | 8. X=4464597 | Y=8420187 |

Կաքավաձորի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի երկրաբանական, հիդրոերկրաբանական և գեոմորֆոլոգիական պայմանները, թույլ են տալիս մշակումն իրականացնել բաց եղանակով:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

առավելագույն երկարությունը- 450 մ,

առավելագույն լայնությունը- 155 մ,

մշակման առավելագույն խորությունը- 46.5 մ,

հաշվեկշռային պաշարների քանակը- 1333.462 հազ. մ³,

կորզվող պաշարների քանակը- 1029.4 հազ. մ³,


մակաբացման ապարների քանակը-126.77 հազ.մ³ այդ թվում՝ փուխը-46.9 հազ.մ³,

փուշտա-79.87 հազ.մ³:

Հանքավայրի տարածքում հողաբուսական շերտը բացակայում է: Հողաբուսական շերտը խառնված է կավավազային նստվածքների և տուֆերի փշրանքների հետ, որը ներկայացվում է որպես փխրուն մակաբացման ապարներ:

Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսվում է 19 տարի, տարեկան արտադրողականությունը /արդյունահանվող պաշար/ կկազմի 55000 մ³ տուֆային զանգված:

Բացահանքի լեռնակապիտալ աշխատանքների ընթացքում իրականացվելու են հետևյալ աշխատանքները՝ բացահանքի հարավային մասից մոտեցող ճանապարհից մուտքային գրունտային ճանապարհի անցում, մակաբացման ապարների հեռացում, արդյունաբերական հրապարակի կառուցում:



Հանույթային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդերկայնական միակող, ցածրաստիճանային մշակման համակարգով: Հանույթային աշխատանքները կիրականացվի քարհատ մեքենայով՝ առանց հորատապայթեցման աշխատանքների: Բացահանքի 1365,2 մ նիշ ունեցող հորիզոնի բացումը կիրականացվի բացահանքի հարավային մասից մոտեցող գրունտային ճանապարհից մուտքային ճանապարհի անցմամբ՝ լայնությունն ընդունվում է 10-12 մ, առավելագույն թեքությունը 50%, երկարությունը՝ 450 մ: 1365,2-1344,2 մ նիշ ունեցող հորիզոնների բացումը կկատարվի նշված գրունտային ճանապարհից հորիզոնական բացող կիսախրամների անցումով, 1342,1-1321,1 մ նիշ ունեցող հորիզոնների բացումը՝ գրունտային ճանապարհից ներքին թեք խրամների և հորիզոնական բացող խրամների անցումով: Հանքաստիճանների բացող խրամների անցումը կկատարվի CMP-026 մակնիշի քարհատ մեքենայի միջոցով:

Ուղիղ կտրվածքի պատքարի անջատումը լեռնազանգվածից կատարվելու է մեքենայացված եղանակով:

Բացահանքում ուղիղ կտրված քարերի բարձումը սպառողի տրանսպորտային միջոցներ կկատարվի ձեռքով:

Բացահանքերի շահագործման ժամանակ նախագծային կորուստները կկազմեն 304062 մ³ կամ 22.8%:

Բացահանքի 1365.2-1340 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումը ներառյալ լցակույտ առաջացնող ապարները 293720 մ³ ընդհանուր ծավալով/փուխը ապարներ՝ 46115 մ³, փուշտա՝ 78535 մ³ և արտադրական թափոններ՝ 169070 մ³ կտեղափոխեն բացահանքի հարավային և արևելյան մասում ձևավորվող ժամանակավոր արտաքին լցակույտեր:

Փուխը ապարները և փուշտան տեղափոխվում են բացահանքի արևելյան մասում ձևավորվող ժամանակավոր արտաքին լցակույտեր: Փուխը ապարները կտեղադրվեն լցակույտի հյուսիս-արևելյան մասում: Լցակույտի հիմքի մակերեսը կկազմի 0,82 հա, վերին հարթակի մակերեսը 0,62 հա, բարձրությունը կտատանվի 4,7-9,2 մ սահմաններում, միջինը կազմելով 6,4 մ, շեպի թեքությունը կկազմի 33-35°, լցակույտի մակերևույթին կտրվի թեքություն առավելագույնը 3°: Փուշտան կտեղադրվի լցակույտի հարավ-արևելյան մասում: Լցակույտի հիմքի մակերեսը կկազմի 1,54 հա, վերին հարթակի մակերեսը 0,96 հա, բարձրությունը կտատանվի 3,9-10,8 մ սահմաններում, միջինը կազմելով 6,4 մ, շեպի թեքությունը կկազմում է 33-35°, լցակույտի մակերևույթին կտրվում է թեքություն՝ առավելագույնը 3°:

Արտադրական թափոնները կտեղադրվեն հարավային ժամանակավոր արտաքին լցակույտում: Լցակույտի հիմքի մակերեսը կկազմի 2,27 հա, վերին հարթակի մակերեսը 1,68 հա, բարձրությունը կտատանվի 7,52-9,2 մ սահմաններում, միջինը կազմելով 8,6 մ, շեպի թեքությունը կկազմի 33-35°, լցակույտի մակերևույթին կտրվի թեքություն՝ առավելագույնը 3°:

Այնուհետև բացահանքի 1337,9 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց կիրականացվի ներքին լցակույտաառաջացում: Արտաքին լցակույտերից ապարները կտեղափոխվեն մշակված տարածություն (ներքին լցակույտ), որի բարձրությունը կտատանվի 2,5-24 մ սահմաններում և կհարթեցվեն: Լցակույտաառաջացումը կիրականացվի բուլդոզերային եղանակով:

Բացահանքում խմելու ջուրը կապահովի ջրատար ավտոտրանսպորտով՝ Կաքավաձոր գյուղից, իսկ տեխնիկական ջրամատակարարումը կիրականացվի TSV-6 /ZIL 130/ մակնիշի ջրցան մեքենայով մոտակա ջրառներից պայմանագրային հիմունքներով՝ աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով:



Հանքավայրի շահագործման ընթացքում գումարային ազդեցություններ չեն առաջանա, քանի որ հանքավայրի հարակից տարածքներում բացակայում են գումարային ազդեցություն առաջացնող գործունեություններ:

Կաքավածորի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի տարածքում արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնաժին ճնշումներ կդրսևորվեն շրջակա միջավայրի բնական բաղադրիչների (հողային ռեսուրսներ, օդային ավազան, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա:

Հայցվող տարածքում տուֆերի կտրման, բարձման և լեռնային զանգվածի տեղափոխման աշխատանքներից կառաջանա փոշու, վնասակար գազերի արտանետումներ մթնոլորտ, արտանետման աղբյուրներ կհանդիսանան բացահանքը, ճանապարհը և լցակույտը:

Վնասակար արտանետումները կրճատելու նպատակով նախատեսվում են՝ մեքենաների և սարքավորումների արտանետիչների վրա պարտադիր գազազտիչ սարքերի տեղադրում, սարքին վիճակում մեքենաների աշխատելու թույլատրում, որոնք 50-70%-ով կպակասեցնեն արտանետումների քանակը:

Շրջակա միջավայրի գնահատման հաշվետվությունում «Эко Центр» ծրագրով կատարվել է նաև արտանետվող վնասակար նյութերի ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների համակարգչային հաշվարկ, որի արդյունքների համաձայն արտանետվող բոլոր նյութերի համար գետնամերձ կոնցենտրացիաները չեն գերազանցում սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

Բացահանքի շահագործման ընթացքում ընդհանուր տնտեսական վնասը (մթնոլորտային օդի, ջրային, հողային ռեսուրսներ) կկազմի 11442110 հազ. ՀՀ դրամ/տարի:


Բացահանքի շահագործման ընթացքում ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, արդյունահանման աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հողաձածկույթի աղտոտումը վառելիքաքսուքային նյութերով կանխելու նպատակով նախատեսված է տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործում սարքին վիճակով՝ բացառելով վառելիքի և յուղի պատահական արտահոսքը: Օգտագործված յուղերի հավաքում մետաղյա տակառներում և պահպում հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուքային նյութերի պահեստում/հետագա ուտիլիզացման նպատակով: Արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում աղբամանների տեղադրում, ինչպես նաև մի շարք այլ բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Արդյունահանման աշխատանքների ընթացքում որոշակի բացասական ազդեցություն կդիտվի հանքավայրի բուսական և կենդանական աշխարհի վրա՝ կխախտվի բուսական ծածկույթը բացահանքի, մակաբացման ապարների լցակույտի, ավտոճանապարհի և արտադրական հրապարակի տարածքում, չխախտված տարածքների բուսածածկի վրա բացահանքից և լցակույտից փոշու արտանետումներով պայմանավորված հնարավոր է որոշակի բացասական ազդեցություն: Կենդանիների համար անհանգստացնող գործոն կլինի բացահանքում և լցակույտում կատարվելիք աշխատանքները և դրանց հետ կապված աղմուկն ու թթթումները:

Բաց եղանակով օգտակար հանածոյի արդյունահանումից առաջացած մակաբացման ապարները հաշվառված են 3400010001000 ծածկագրով, արդյունաբերական թափոնները՝ 3400000000000 ծածկագրով, որոնք հանդիսանում են ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ և դասվում են վտանգավորության 5-րդ դասին:

Բացահանքի շահագործման ընթացքում կառաջանան բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ՝ իրենց սպառողական



հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ, բանեցված շարժիչների յուղեր, բանեցված դողածածկեր, չտեսակավորված կենցաղային աղբ: Թափոնների քանակի, վտանգավորության դասի, ծածակագրերի և կառավարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:

Բացահանքում աղմուկ առաջացող աղբյուր կարող է հանդիսանալ ավտոտրանսպորտի, բուլդոզերի և էքսկավատորի աշխատանքները:

Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման աշխատանքները, տուֆերի բարձման և տեղափոխման աշխատանքները, լցակայանի ձևավորումը, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը: Հանքավայրում գումարային հաշվարկային ծայնային բնութագիրը՝ LAէկվ կընդունվի 65դԲԱ:

Համաձայն գնահատման հաշվետվության աղմուկի մակարդակը Կաքավաձոր բնակավայրի մոտ կկազմի՝ 30դԲԱ, ըստ գործող նորմատիվ պահանջների, աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի գոտում կազմում է 45 դԲԱ:

Գիշերային ժամերին տեղամասի սահմաններում արդյունահանման աշխատանքներ չեն իրականացվելու:

Արդյունահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված կառաջանան տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված կլինի տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, ըստ հաշվետվության թրթռումները չեն գերազանցի սահմանային թույլատրելի մակարդակը:

Աղմուկի և տատանումների կառավարման համար նախատեսված են՝ աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով, բեռնատար մեքենաների տեղաշարժ նախապես մշակված և համաձայնեցված մշակված գրաֆիկով, տեխնոլոգիական սարքավորումների տեղադրում տատանումներ մեկուսացնող հատուկ հիմքերի վրա; բաց դիմածածկոցներով սարքավորումների և մեխանիզմների շահագործման բացառում և այլն:

Բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումները, որոնք թույլ կտան նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, այդ միջոցառումներից են՝

- լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքների կարգավորում, լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների վրա չեզոքացուցիչների տեղադրում, ինչը կնվազեցնի, կկրճատի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածի, արտադրական հրապարակի, ճանապարհների ջրցանում,
- ներհանքային ճանապարհների բարեկարգում, խճապատում՝ մակաբացման շերտի ապարներով,
- լցակայանի, խախտված տարածքների ռեկուլտիվացիա, ինչը կկրճատի լցակայանի մակերեսից փոշու ծավալները,
- մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության՝ բնապահպանական միջոցառումների վերանայում,
- արտադրական տարածքի կանաչապատում՝ արագ աճող ծառատեսակներով կամ թփերով, ինչը թույլ կտա կրճատել փոշեգոյացման ծավալները,



- ճանապարհների խճապատում, ինչը կկրճատի տեխնիկական ջրի ծախսը, կնվազեցնի փոշեգոյացումը,

- շահագործման արդյունքում առաջացող կեղտաջրերի հավաքում անթափանց հորի մեջ, ինչի հետագա դատարկումը կկազմակերպվի մասնագիտացված ընկերության ուժերով,

- կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ՝ վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություններ և այլն:

Նախատեսված են նաև հնարավոր անբարենպաստ օդերևութաբանական պայմանների, հակավթարային, արտակարգ իրավիճակների կառավարման բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների իրականացման համար տարեկան նախատեսվում է մասնահանել 230.000 հազ. ՀՀ դրամ:

Շահագործման աշխատանքների ավարտից հետո լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի կենթարկվեն բացահանքը՝ 5,95 հա և արտադրական հրապարակը՝ 0,03 հա մակերեսներով, ընդամենը՝ 5,98 հա: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո կիրականացվի նաև կենսաբանական ռեկուլտիվացիա:

Ընդհանուր ռեկուլտիվացիոն աշխատանքների արժեքը կկազմի 2278100 հազ. ՀՀ դրամ, ինչը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամազխիսն Կառավարության 2021թ.-ի հոկտեմբերի 21-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Կաքավաճորի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի շահագործման ընթացքում կիրականացվի նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդը աղտոտող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ բացահանքի տարածքում, ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

2. Լեռնատրանսպորտային սարքավորումների՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական ստուգումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

3. Հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

4. Վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ:

Մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 550.0 հազ. ՀՀ դրամ:

Պարճառաքանական մաս. Արագածոտնի մարզի Կաքավաճորի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Կաքավաճոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:



Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:
2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում բացառել ցանկացած հնարավոր ազդեցություն հայցվող տարածքից 0.8 կմ հեռավորության վրա գտնվող ձորակի վրա:
4. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:
5. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/:
6. Իրականացնել արտադրական տարածքի կանաչապատում՝ արագ աճող ծառատեսակներով կամ թփերով, ինչը նախատեսված է հաշվետվությամբ:
7. Հետագայում խճի և ավազի արտադրության համար նախատեսվող արտադրամասի, ջարդիչ կայանքի դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գործունեության նախագծման փաստաթղթերը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:



8. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

9. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՄՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիրյան